

**Վերա Զվյագինցեվա
(Խուս Բանաստեղծ)**

Ինչպէս մարդուն են խոր սիրահարւում,
Չայնին, շարժմունքին, փայլին աչքերի,
Այնպէս էլ իմ մեծ, փորորկոտ դարում
Սիրահարուեցի ես հին մի երկրի:

Ինչքա՞ն ճամբայ էր կտրել հարկաւոր
Ու գետեր անցնել, բաղաֆներ, գիւղեր,
Որ հեքիաբային Դերեկը այսօր
Էր պաղ շառաչով իմ դէմքին փարուէր:

Որ Հոռու ձորը մտնէի յանկարծ,
Ուր անակնկալ կէսօրն է մքնում,
Ասես բարայր ես մտնում երկիւղած,
Ասես բարակոփ մի վանի ես մտնում:

Ինձ վիճակուել էր սիրե՛ մէկընդմիշտ
Այս հողը՝ շոգից ու վշահից խանձուած,
Հողմերի ձեռքով ժայռին փորագրուած
Որմնաբանդակնե՛րն այս խոժոռ ու խիստ:

**Էդուարդաս Մեժելայտիս
(Լիտվացի Բանաստեղծ)**

ՄԻ ԼԱՅ, ՀԱՅԱՍՏԱՆ

Մի լայ, Հայաստան, ծանր է իմ սրտին
Քո կոմիտասեան հառաջը տիսուր...
Գեռ բոցկտում է արեգակը հոր,
Եւ բոցկտում է ժողովուրդն այս հին:

Գիտեմ, թէ մի օր հազար ու հազար
Չոհերիդ աճիւնն իրար գումարուի,
Գոյանայ պիտի սրբազն մի սար.
Որ Արարատին կը հաւասարուի: